ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան, Մամիկոնյանց 46/5

«29» 10 2021 թ. N 06/72233-21

Ձեր _____

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ
նախագահ

Շ.Դոյդոյանին

ք.Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ,
էլ.հասցե՝ foi@foi.am, կայք՝ www.foi.am

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

ՀՀ քննչական կոմիտեի նախագահին հասցեագրած 25.10.2021թ. հարցման կապակցությամբ հայտնում եմ, որ Ձեր հաղորդման առթիվ 2021թ. սեպտեմբերի 3-ին ՀՀ քրեական օրենսգրքի 315.2-րդ հոդվածով հարուցված, Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում քննված թիվ 10203121 քրեական գործը 2021թ. սեպտեմբերի 17-ին միացվել է Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երրորդ բաժնում քննվող թիվ 13132121 քրեական գործին և շնորհվել է 13132121 համարը:

Հայտնում եմ, որ թիվ 13132121 քրեական գործով նախաքննությունը շարունակվում է, քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ հետազոտման համար վարույթն իրականացնող մարմնի կողմից ձեռնարկվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ:

Ինչ վերաբերում է նախաքննության ավարտման ժամկետներին, ապա տեղեկացնում եմ, որ նախաքննության ավարտ կարող է հայտնվել գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով հավաքված ապացույցները ստուգելուց և գնահատելուց հետո:

Հարգանքով՝
արդարադատության առաջին դասի
խորհրդական Վ.Մեսրոպյան